

ՄԱՐԻԱՄ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Առդիպ, մագիստրատուրա, 1-ին կուրս

ՀՀ ԿՈՒՏԱԿԱՅԻՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Հիմնաբաներ.

կուրակային կենսաթոշակային համակարգ, ներդրումներ, արդյունավետություն, ֆոնդեր, փոխհատուցում, կառավարիչներ

Կուրակային կենսաթոշակային համակարգի նպատակն է՝ թեթևացնել պետության սոցիալական բեռնվածությունը և ապահովել հավասարակշռություն: Այս համակարգի գերխնդիրը կառավարիչների կողմից ֆոնդերին հատկացվող միջոցների ճիշդ և թափանցիկ կառավարումն է, որն էլ կնպաստի համակարգի նկատմամբ վստահության բարձրացմանը: Անհրաժեշտ է նաև ամրագրել անձի աշխատանքային եկամույների և կենսաթոշակների օբյեկտիվ կապը, որն էլ կախված է գոյություն ունեցող երեք տեսակի ֆոնդերի (կայուն եկամտային, պահպանողական, հավասարակշռված) ընտրությունից:

Բազմիցս նշվել է, որ կենսաթոշակային համակարգերի փոփոխության առջև կանգնած էին և կանգնած են աշխարհի շատ երկրներ, որոնց թվում է նաև Հայաստանի Հանրապետությունը:

Չկա կատարյալ մի համակարգ, որը վստահորեն կարող ենք կիրառել բոլոր երկրներում, և որը կապահովի միանման արդյունք, քանի որ յուրաքանչյուր երկիր ունի իր տնտեսական, սոցիալական, մշակութային, քաղաքական և պատմական առանձնահատկությունները: Այնուամենայնիվ, կան կենսաթոշակային համակարգի առանձնահատկություններ և բնութագրիչներ, որոնք կարող ենք վերլուծության ենթարկել և փաստել համակարգի արդյունավետ կամ ոչ արդյունավետ լինելը: Տարբեր երկրների կենսաթոշակային համակարգերի գնահատում և դասակարգում (ըստ առաջնային չափանիշների) արդեն 5 տարի է՝ իրականացնում է նաև մարդկային ռեսուրսների և ֆինանսական ծառայությունների վերաբերյալ խորհրդատվություն մատուցող «Մերկեր» ընկերությունը¹, որը կենսաթոշակային համակարգերը համեմատում է համարժեքության, կայունության և ամբողջականության ցուցանիշների հիման վրա:

Համարժեքության ցուցանիշի հիման վրա որոշվում է կենսաթոշակային համակարգի արդյունավետությունը՝ համարժեք կենսաթոշակի ապահովում (փոխհատուցման գործակից), կենսաթոշակային ֆոնդերում անհատների խնայողությունների մակարդակի ավելացում:

Կայունության ցուցանիշի հիման վրա որոշվում է մասնավոր կենսաթոշակային ֆոնդերի կարևորությունը տնտեսության համար: Կայուն կենսաթոշակային համակարգերը նպաստում են մասնավոր կենսաթոշակային սխեմաներին բնակչության մասնակցության մակարդակի ավելացմանը (ծածկույթ), կենսաթոշակային ակտիվների ավելացմանը ՀՆԱ-ի նկատմամբ, ժողովրդագրական ցուցանիշների բարելավմանը և պետական պարտքի նվազմանը:

¹ St'u MelbourneMercerGlobalPensionIndex 2017:

Ամբողջականության բարձր ցուցանիշը վկայում է կենսաթոշակային սխեմաների համալիր կարգավորման մասին, որն ապահովում է կենսաթոշակային սխեմաների արդյունավետ կառավարում, ռիսկերից պաշտպանվածություն և տեղեկատվության փոխանցում մասնակիցներին:

Վերոնշյալ ցուցանիշների հիման վրա որոշվում է յուրաքանչյուր ցուցանիշի միջին կշռված արժեքը, իսկ դրանց ամփոփ գնահատականի միջոցով կենսաթոշակային համակարգերը դասակարգվում են ըստ հետևյալ սանդղակի¹:

«Մելբուրն Մերկեր գլոբալ կենսաթոշակային ինդեքս – 2017» զեկույցում համեմատությունը կատարվել է 30 երկրների միջև, որոնք ընդգրկում են աշխարհի բնակչության ավելի քան 55%-ը: Լավագույն եղյակը ունի B+ աստիճան, և այդ երկրներն են Դանիան, Նիդեռլանդները, Ավստրալիան, համապատասխանաբար՝ 78.9%, 78.8%, 77.1% ընդհանուր ցուցանիշներով: Ցավոք, մենք չենք կարող գնահատել Հայաստանի Հանրապետության կենսաթոշակային համակարգի գործունեության արդյունավետությունը, քանի որ դեռևս փոխհատուցման գործընթաց տեղի չի ունեցել:

Կենսաթոշակային համակարգի դասակարգման սանդղակ

Աստիճան	Ցուցանիշ	Նկարագրություն
A	>80	Առաջին դասի կենսաթոշակային համակարգ, որն ապահովում է բարձր կենսաթոշակ, կայուն է և ունի ամբողջականության բարձր մակարդակ:
B+	75-80	Համակարգ, որն ունի դրական բնութագրիչներով ամուր կառուցվածք, սակայն կան որոշ ոլորտներ, որոնք A աստիճանին հասնելու համար բարելավման կարիք ունեն:
B	65-75	
C+	60-65	Համակարգ, որն ունի որոշ դրական հատկանիշներ, բայց ունի նաև մեծ ռիսկեր և/կամ թերություններ, որոնք պետք է շտկվեն: Առանց այդ բարելավումների՝ համակարգի արդյունավետությունը և/կամ երկարաժամկետ կայունությունը հարցականի տակ կարող են դրվել:
C	50-60	
D	35-50	Համակարգ, որն ունի որոշակի ցանկալի հատկանիշներ, բայց ունի նաև մեծ թերություններ և/կամ բացթողումներ, որոնք պետք է շտկվեն: Առանց այդ բարեփոխումների՝ դրա արդյունավետությունն ու կայունությունը կասկածելի են:
E	<35	Համակարգ, որը ձևավորման վաղ փուլում է կամ էլ դեռևս գոյություն չունի:

Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպությունը (ՏՀԶԿ) հրապարակել է իր ամենամյա Pension Funds in Figures տեղեկագիրը, որն ուսումնասիրում է կուտակային կենսաթոշակային համակարգեր ներդրած ՏՀԶԿ անդամ և ոչ անդամ պետություններում կենսաթոշակային ֆոնդերի կառավարման արդյունքները: Ըստ վերջին ուսումնասիրության՝ 2016 թ. կենսաթոշակային ֆոնդերը գրանցել են ֆոնդերի զուտ եկամտաբերության (ներդրման ծախսերը հանված) դրական ցուցանիշներ: Արդյունքում, ՏՀԶԿ կշռված միջին իրական եկամտաբերությունը 2%-ից ավելի է²: ՏՀԶԿ տարածքից դուրս, ուսումնասիրված 23 տնտեսություններից 19-ում իրական եկամտաբերությունը գերազանցել է 2%-ը և միջինում ավելի բարձր է եղել,

¹ www.worldbank.org/pensions

² www.cecd.org

քան ՏՀԶԿ անդամ պետություններում: Ամենաբարձր իրական եկամտաբերությունը գրանցվել է Հայաստանում կազմելով 10.2%:

2014 թվականին Հայաստանում ներդրվել է կուտակային կենսաթոշակային համակարգը: ՀՀ Կառավարության և «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ-ի միջև կնքված պայմանագրի համաձայն՝ դեպոզիտարիան իրականացնում է պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի մասնակիցների ռեեստրի վարումը²: Օրենքով սահմանված կարգով կենսաթոշակային ֆոնդերի ակտիվների պահառության գործառույթը նույնպես վերապահված է դեպոզիտարիային: Համակարգի մասնակիցներ կլինեն 1974 թ. հունվարի 1-ից հետո ծնված Հայաստանի քաղաքացիները: «Հայաստանում կուտակային կենսաթոշակային համակարգի ներդրման մասին» օրինագծի համաձայն՝ բազային նվազագույն կենսաթոշակը կհավասարվի ապրուստի համար անհրաժեշտ նվազագույնին, իսկ հիմնական կենսաթոշակը կկազմի ապրուստի համար անհրաժեշտ նվազագույնի 150%-ը: Ամենամյա պարտադիր վճարները կկազմեն աշխատավարձի 5%-ը, որի վրա կավելանա նաև պետության կողմից վճարվող լրացուցիչ 5%-ը (բայց 25 հազ. դրամից ոչ ավելի):

Կուտակային կենսաթոշակային ակտիվների կառավարումը իրականացնում են միջազգային բարձր հեղինակություն ունեցող երկու ակտիվների կառավարիչները՝ «Ցե-Կվադրատ Ամպեգա Ասեթ Մենեջմենթը» և «Ամունդի-Ակբա Ասեթ Մենեջմենթ» ՓԲԸ-ն: Վերջինս, որպես պարտադիր կենսաթոշակային ֆոնդի կառավարիչ, արտոնագրվել է 19/11/2013 թ.՝ ՀՀ կենտրոնական բանկի կողմից: Բաժնետերերն են ֆրանսիական AMUNDI ASSET MANAGEMENT ընկերությունը՝ 51% մասնակցությամբ և «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈՒԼ» բանկը՝ 49% մասնակցությամբ: Ֆրանսիական «Ամունդին» կառավարման ներքո աշխարհում ունի ավելի քան 5 տրիլիոն դոլար: «Ցե-Կվադրատ Ամպեգա Ասեթ Մենեջմենթ Արմենիա» ՍՊԸ-ն, որպես պարտադիր կենսաթոշակային ֆոնդի կառավարիչ, արտոնագրվել է 29/11/2013 թ.՝ ՀՀ կենտրոնական բանկի կողմից: Բաժնետերերն են ավստրիական «Ցե-Կվադրատ» ներդրումային ընկերությունը (C-QUADRAT Investment AG)՝ 74.9% մասնակցությամբ և գերմանական «Տալանքս Ասեթ Մենեջմենթ» (Talanx Asset Management GmbH) ընկերությունը՝ 25.1% մասնակցությամբ: Խումբն ամբողջ աշխարհում կառավարման ներքո ունի ավելի քան 130 մլրդ ԱՄՆ դոլար: Կառավարիչները կուտակային կենսաթոշակային միջոցներով ներդրումներ են կատարում այնպիսի ֆինանսական գործիքներում, ինչպիսիք են պետական պարտատոմսերը, ավանդները, բաժնետոմսերը:

Մեր երկրում իրականացված կենսաթոշակային բարեփոխումները պայմանավորված են ծերացող ազգ լինելով, աշխատունակ տարիքի բնակչության արտագաթի մեծ ծավալով, որոնք հանգեցրել են զբաղված բնակչության բեռի մեծացմանը, մասնավորապես՝ 3-4 աշխատողին բաժին է ընկնում 1 թոշակառու:

Արդյունքում, ՀՀ-ում ներդրված նոր կենսաթոշակային համակարգի նպատակներն են՝ նվազագույնի հասցնել, ապա իսպառ բացառել աղքատությունը և աղքատության ռիսկը կենսաթոշակառուների շրջանում, ապահովել համակարգի ֆինանսական կայունությունը երկարաժամկետ ապագայում,

² www.epension.am

կապ ամրագրել անձի աշխատանքային եկամուտների և կենսաթոշակների միջև:

Օրենքով արգելված է կենսաթոշակային ակտիվների ներդրումը այնպիսի ոչ ֆինանսական ակտիվներում, ինչպիսիք են անշարժ գույքը, թանկարժեք մետաղները և այլն, ինչի շնորհիվ գումարներն անհամեմատ ապահով են:

Կենսաթոշակային խնայողություններին ավելացած եկամտի չափը կարող է տարբերվել այլ մասնակիցների կուտակային հատկացումների կառավարման արդյունքից՝ կախված նրանից, թե որ ֆոնդում են կուտակում միջոցները:

Գոյություն ունեն երեք տիպի կենսաթոշակային ֆոնդեր, որոնցից որևէ մեկին նախապատվություն տալով՝ ընտրում ենք միջոցների կառավարման քաղաքականությունը, հետևաբար նաև՝ եկամտաբերության մակարդակը: Ֆոնդերը տարբերվում են ըստ ռիսկայնության և եկամտաբերության¹:

Կայուն եկամտային ֆոնդի դեպքում ընտրում ենք մեր միջոցների համար ցածր, սակայն կայուն եկամուտ: Այս ֆոնդը ռիսկեր չի պարունակում, սակայն եկամուտը ցածր է: Միջոցներն ամբողջությամբ՝ 100%-ով, ներդրվում են պետական պարտատոմսերում և ավանդներում:

Պահպանողական ֆոնդը միջին ռիսկայնության ֆոնդ է, սակայն ավելի եկամտաբեր, քան կայուն եկամտայինը: Այս ֆոնդի միջոցների մինչև 25%-ը կարող է ներդրվել այնպիսի ռիսկային ֆինանսական գործիքներում, ինչպիսիք են բաժնետոմսերը:

Հավասարակշռված ֆոնդը նախատեսված է ավելի բարձր ռիսկի հակված մասնակիցների համար: Ֆոնդի եկամտաբերությունը բարձր է, համեմատաբար ավելի բարձր են նաև ռիսկերը: Ֆոնդի միջոցների մինչև 50%-ը թույլատրված է ներդնել ռիսկային գործիքներում:

Մասնակիցների կուտակային միջոցներով ներդրումներ կարող են կատարվել ինչպես ՀՀ դրամով, այնպես էլ արտարժույթով:

Կարևոր է հիշել, որ կառավարիչները պարտավոր են պարտադիր կենսաթոշակային ակտիվների առնվազն 60%-ը ներդնել ՀՀ դրամով:


Բացի արժույթային սահմանափակումից, գոյություն ունի նաև կուտակային կենսաթոշակային միջոցներով ներդրումների աշխարհագրական սահմանափակում: Կենսաթոշակային ֆոնդերի կառավարիչներին թույլատրված է այլ երկրներում միջոցները ներդնել միայն Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ (OECD)), անդամ պետություններում, որոնց տնտեսությունները նմանատիպ ներդրումների համար առավել ապահով են:

Նշենք, որ ՀՀ-ում կենսաթոշակային կուտակային պարտադիր համակարգի շրջանակներում մասնակիցների թիվը, 2 կենսաթոշակային հիմնադրամներում, 2016 թ. նոյեմբերի 1-ի դրությամբ, հասել է 155 հազարի, որից 65 հազարը ներկայացնում են պետական, իսկ մնացած 90 հազարը՝ մասնավոր հատվածը: Նշված հիմնադրամների ստեղծման օրից (2013 թ., նոյեմբեր) նրանց եկամտաբերությունը հասել է 25.9%-ի (մեկ փայաբաժնի գինը 1000 դրամից հասել է մինչև 1259 դրամի): 2016 թ. 10 ամիսներին կենսաթոշակա-

¹ Տե՛ս ՀՀ «Կուտակային կենսաթոշակների մասին» օրենք:

յին հիմնադրամների տարեկան միջին եկամտաբերությունը կազմել է 14.4%: 2016 թ. նոյեմբերի 1-ին նշված հիմնադրամների կողմից կուտակված միջոցները կազմել են 57.2 մլրդ դրամ, որից 29%-ը կամ 17 մլրդ դրամը տեղաբաշխված է բանկային ավանդներում, 5%-ը կամ 2.8 մլրդ դրամը՝ կորպորատիվ, հիփոթեքային և միջազգային կազմակերպությունների պարտատոմսերում, 41%-ը կամ 23,3 մլրդ դրամը՝ պետական պարտատոմսերում, 25%-ը կամ 14.1 մլրդ դրամը՝ օտարերկրյա ներդրումային հիմնադրամների արժեթղթերում (ETF - Exchanged traded funds՝ ներառելով Apple, Google, Microsoft, Nestle, Toyota, Nissan, Sony, Coca-Cola և այլ ընկերությունների արժեթղթերը, ինչպես նաև՝ ԱՄՆ պետական պարտատոմսերը և Gold mining fund-ի արժեթղթերը):

Կուտակային մասնավոր համակարգն ունի երկու հիմնական առավելություն. առաջին՝ բյուջեն ազատում է կենսաթոշակային «գլխացավանքից», երկրորդ՝ տնտեսական աճին նպաստելու մեծ ռեսուրս է: Ընդ որում, երկրորդ ազդեցությունը երբեմն շատ ավելի է կարևորվում, քանի որ այն կարելի է գնահատել բարեփոխման հենց առաջին տարիներին: Սպասվում է, որ Հայաստանում կենսաթոշակային հաշիվներին տարեկան կկուտակվեն 120-130 մլն դոլարի միջոցներ՝ ՀՆԱ շուրջ 1%-ի չափով: Հաջող ներդրումների դեպքում դրանք ՀՆԱ-ի վրա մինչև 2-3% անուղղակի ազդեցություն կարող են ապահովել: Կենսաթոշակային ռեսուրսները կարելի է ուղղել միայն արժեթղթերի ձեռք բերմանը կամ ավանդադներ բանկերում, հետևաբար՝ սպասվում է բոլոր տեսակի տոկոսադրույքների նվազում (այդ թվում՝ վարկերի): Սակայն հարց է առաջանում՝ որքանո՞վ է դա իրատեսական:



Վերոնշյալ ֆոնդերի ակտիվների ընդհանուր կառուցվածքը 2017 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ներկայացված է գծապարկերում

Երբ Չիլիում սկսեցին կենսաթոշակային բարեփոխումը, երկրի կապիտալի շուկան վերելքի մեջ էր ու կլանեց կենսաթոշակային բոլոր ռեսուրսները՝ նպաստելով «չիլիական հրաշքի» կերտմանը: Մեր երկրում կապիտալի շուկան գրեթե զրոյական վիճակում է, հետաքրքրություն են ներկայացնում միայն պետական պարտատոմսերը: Սակայն այդ պարտատոմսերով տնտեսություն չես զարգացնի, իսկ մասնավոր թողարկումներ հազվադեպ են լինում: Այստեղ առկա է կառավարության աշխատանքի ակնհայտ բացթողումը. բարձր տոկոսադրույքներ սահմանելով պետական պարտատոմսերի նկատմամբ՝ կառավարությունը խոչընդոտել է մասնավոր պարտատոմսերի թողարկումը: Միջնաժամկետ պետական պարտատոմսերը ներկայում թողարկվում են 13-14% եկամտաբերությամբ, մինչդեռ, որևէ մասնավոր կազմա-

կերպություն այդպիսի տոկոսադրույքով թողարկում չի կատարի: Կենսաթոշակային ռեսուրսների մի մասը (40%-ը) դուրս է գալու հանրապետությունից, սակայն եթե երկրի ներսում իրացման շուկա չլինի, ՀՀ կենտրոնական բանկը ստիպված կլինի թույլատրել մնացած ռեսուրսների դուրս հանումը: Իսկ դա մեր տնտեսությանը ոչ մի լավ բան չի խոստանում:

Հնարավոր է՝ նոր համակարգը նպաստի ստվերային աշխատավարձերի կրճատմանը, քանի որ այն գործատուները, որոնք «սպիտակ» աշխատավարձ են վճարում, ակնհայտ առավելություն են ստանում «ծրարով» աշխատավարձ վճարողների նկատմամբ:

Ռիսկերը հիմնականում պայմանավորված են երկարատև հեռանկարում ֆինանսական ու քաղաքական կայունության ապահովմամբ: Սակայն որևէ մեկը դա երաշխավորել չի կարող: Համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի ընթացքում կենսաթոշակային հիմնադրամները ողջ աշխարհում զգալի վնասներ կրեցին, սակայն փրկվեցին պետական աջակցության շնորհիվ:

Բրիտանացի փորձագետ Դերեկ Քոլիարդը, ով Երևանում դասախոսություն էր կարդում իր երկրի փորձի մասին, ասաց, որ Մեծ Բրիտանիայում մասնավոր կենսաթոշակային կառավարիչները չարդարացրին մարդկանց հույսերը: Կենսաթոշակային հիմնադրամներից մեկում վատնումի կասկած առաջացավ. մարդիկ չէին վստահում ու սկսեցին դիմել՝ նախկին համակարգին վերադառնալու համար: Ճիշտ է, մեր պաշտոնյաները վստահեցնում են, որ կառավարիչների գործունեության վրա խիստ հսկողություն կսահմանեն, սակայն միայն ժամանակը ցույց կտա, թե որքանով դա արդյունավետ կլինի: Այնուամենայնիվ, հեղինակավոր ու հայտնի կառավարիչների մուտքը վստահության որոշ պաշար ստեղծում է: Եվ՝ ֆրանսիական «Լմոնդին», և՛ գերմանական «Յե-Կվադրատը» որևէ աղմկահարույց պատմության մեջ ներքաշված չեն եղել:

«Կուտակային կենսաթոշակների մասին» օրենքը գերծ չէ որոշ թերություններից, որոնցից մեկն այն է, որ օրենքը տարածվում է մինչև 1974 թ. հունվարի 1-ը ծնվածների վրա: Ըստ այդմ՝ նախորդ աշխատանքային ստաժը «ջուրն է ընկնում», իսկ 25 կամ 30 տարում կուտակված գումարը համադրելի չէ 45 տարում կուտակվածի հետ: Էստոնիայում, օրինակ, 2002 թ. ներդնելով պարտադիր կուտակայինը՝ այն տարածեցին միայն 19 տարեկանների ու հաջորդ սերունդների վրա, որպեսզի չվտանգեն արդեն աշխատանքային ստաժ ունեցողներին: Համակարգը նպաստավոր է միայն բարձր աշխատավարձ ստացողների համար: 40 տարվա աշխատանքային ստաժի (մասհանումներ կատարելու պայմանով) դեպքում կարելի է հավակնել միջին աշխատավարձի առնվազն 40%-ի չափով կենսաթոշակի: Սակայն այստեղ էլ որոշ հարցեր են առաջանում: Օրինակ, հղիները կտուժեն այն պատճառով, որ հղիության արձակուրդի ժամանակ մասհանում չեն կատարելու, թեև այդ արձակուրդը գումարվում է աշխատանքային ստաժին: Բացի դրանից, աշխատանքային կենսաթոշակը հաշվարկվելու է՝ կյանքի սպասվող տևողությունը հաշվի առնելով, իսկ կանանց դեպքում այն զգալիորեն բարձր է (78 տարի՝ տղամարդկանց 71-ի համեմատ): Հետևաբար, կանանց կենսաթոշակը հաշվի նույն մնացորդի դեպքում ավելի քիչ կլինի, քան տղամարդկանցը:

Որպեսզի մեր երկրում աշխուժանա ներդրումային և գործարար ոլորտը, առաջարկում ենք կենսաթոշակային ֆոնդերին հատկացվող միջոցների որոշակի մասը ներդնել նորաստեղծական ոլորտում, որը կօգնի, որպես հեռանկարային և ներուժ ունեցող երկիր, հաստատուն և առաջատար տեղ գրավել տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում, նաև դրամական միջոցները կշրջանառվեն, ինչն էլ պետությանը կապահովի անհրաժեշտ դրամական հոսքերով (մասնավորապես հարկերի տեսքով)՝ իր կարիքները բավարարելու համար:

МАРИАМ МАТЕВОСЯН
ОБСЛЕДОВАНИЕ НАКОПИТЕЛЬНОГО ПЕНСИОННОГО ФОНДА РА

Ключевые слова: накопительная пенсионная система, инвестиции, эффективность, фонды, возмещение, управляющие.

Цель накопительного пенсионного фонда снизить социальную нагрузку государства и обеспечить равновесие. Главная цель системы правильное и прозрачное управление средств со стороны управляющих фондов которое обеспечит доверие к системе. А так же утвердить объективную связь между пенсией и заработком лица, которое связано с выбором из действующих 3 фондов стабильно доходны, консервативный, уравнивающий.

MARIAM MATEVOSYAN
ANALYSIS ACCUMULATIVE PENSION SYSTEM RA

Key words: accumulative pension system, investments, efficiency, funds, compensation, management.

The cumulative pension system aim to alleviate the social burden of the state and ensure balance. The key objective of this system to ensure the proper and transparent management of funds allocated by the managers to the fund, which will ensure the confidence in the system. Also, fix the objective relationship between a person's earnings and pensions, which also depends on which types of funds to choice - stable income, conservative, balanced.

ԱՆՆԱ ՄԱՏԻՆՅԱՆ
Տնտեսագիտություն, բակալավրիատ,
2-րդ կուրս

ԻՆՈՎԱՑԻԱՆԵՐԻ ԽԹԱՆՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Հիմնաբառեր. նորարարական գործունեություն, առաջընթաց, տնտեսական աճ, մրցունակ ազգային ինովացիոն համակարգ

Հոդվածում նկարագրված է Հայաստանի Հանրապետության ինովացիոն համակարգը: Անդրադարձ է կատարվել գիտարար ոլորտներին, ներկայացվել են բոլոր պայմանները, որոնց առկայության դեպքում ինովացիան կդառնա ՀՀ տնտեսական աճի գործոն: Առաջ են բերվել նաև պարզառոտները, թե ինչու պետք է շեշտադրումը